AZG Daily #28, 19-09-2014

ՀԱՅԵՐԵՆԸ ԱՓԻ ՄԵՋ՝ ՉՐՈՒՅՑ 73. ԾԵԾԵԼ, ԹԵ՝ ԳԱՆԱՀԱՐԵԼ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵՔ «ԱԶԳ»ԻՆ

#026, 2014-09-05 > #027, 2014-09-12 > #028, 2014-09-19

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ #28, 19-09-2014

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Տեղադրվել է՝ 2014-09-18 23:30:39 (GMT +04:00)

«ԳԵՐՄԱՆԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԱՎԵԼԻ ՔԱՆ 100 ՏԱՐԻ»

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա

Գերմանահայկական ընկերակցության 100-ամյակի միջոցառումների ծիրում այս օրերին (սեպտեմբերի 18-19-ին) Երեւանի պետական համալսարանում սիմպոզիում է գումարվում ի հիշատակ ԵՊՀ պատվո դոկտոր, գերմանացի աստվածաբան, հայագետ Հերման Գոլցի (1946 - 2010 թթ.): Այսօր Երեւանի սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում առավոտյան ժամերգության ընթացքին աղոթք կնչի հայ-գերմանական մշակութային կամուրջը հաստատած Յոհաննես Լեփսիուսի, Գարեգին Հովսեփյանցի, Հերման Գոլցի հիշատակին, այնուհետեւ ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետում նրանց անունով լսարան կանվանակոչվի, կփակցվի հուշատախտակ: Սիմպոզիումին կմասնակցեն հայ եւ գերմանացի գիտնականներ երկու երկրների տարբեր համալսարաններից, նրանց թվում դոկտոր պրոֆեսորներ Խաչիկ Գազերը (Նյուրնբերգ), որ կանդրադառնա գերմանահայկական հարաբերություններին, «Յոզեֆ Կարստի միջին հայերենի բառարանը» կներկայացնեն Գերհարդ Մայսերը (Հալլե-Զաալե) եւ Լիանա Հովսեփյանը (Երեւան), «Հայ եւ գերմանական գրականությունը եվրոպական կոնտեքստում» թեման կարծարծեն Հանս- Յոախիմ Զոլմը (Հալլե-Զաալե) եւ Ավիկ Իսահակյանը (Երեւան), «Հայ եկեղեցին Գերմանիայում» կներկայացնի Ռայնհարդ Թիյոլեն (Հաալե-Զաալե), Հայ գրատպության 500-ամյակին կանդրադառնան Արմենուհի Դրոստ -Աբգարյանը (Հաալե-Զաալե) եւ Մելիսե Փեհլիվանյանը (Բեռլին), Մարգրեթ Յաշկեն (Դայզենդորֆ) եւ Գայանե Էլիազյանը (Երեւան) համատեղ հրատարակության, միջնադարյան ձեռագրերի վերականգնման եւ մասնագետների վերապատրաստման նախագիծը կներկայացնեն, «Հայերը, Հայաստանը եւ Գյոթթինգենը . հայացք գիտահետազոտական ավանդույթներներին» թեման արծարծելու է Մարտին Տամկեն (Գյոթթինգեն), «Յոհաննես Լեփսիուս գերմանացի բացառիկը. Հայոց ցեղասպանություն, մարդասիրություն եւ մարդու իրավունքներ» վերնագրյալ դասախոսությամբ ելույթ կունենան Աքսել Մայսները (Շկոյդից), Աշոտ Հայրունին (Երեւան): Բեռլինում ՀՀ դեսպանության ներկայացուցիչ Աշոտ Սմբատյանի ելույթը ուրվագծում է «Գերմանահայկական դիվանագիտական հարաբերությունները»: Վերջին բանախոսը Լիլիթ Սիմոնյանն է եզրափակիչ «Գարեգին Հովսեփյանց. Հալլեի համալսարանի հեղինակավոր սանը» ակնարկով:

Սիմպոզիումին «Գերմանահայկական ընկերության 100-ամյակը. հիշել, հիշատակել, կերտել» 2014-ին Գերմանիայում լույս տեսած տոնական հրատարակությունը կներկայացնի ընկերակցության նախագահ , «Հայ-գերմանական նամակնի» եռամսա հանդեսի գլխավոր խմբագիր Ռաֆֆի Քանդյանը (Հանովեր), ում հետ զրույցի պատիվն էինք ունեցել ավելի վաղ Գերմանիայում, երբ հունիսին Պոտսդամ դղյակում լեփ-լեցուն դահլիճում հանդիսավոր ներկայացրել էին ընկերակցության 100-ամյա ուղին:Նա մշակութային ոլորտում ոսկերչի աշխատանք է կատարում. ինչ իր անվան հղումով լույս է տեսնում, համոզված ես, որ այն առանց սխալների ու վրիպակների է, լուրջ ու վստահելի: Նրա աշխատանքը լավագույն նվիրումն է գերմանահայկական հարաբերությունների հարահոսին: Իսկ ամենամայումը հրատարակություններն են, տպագիր ժառանգությունը, որի մաղը 300 էջանոց վերոհիշյալ հրատարակությունն է: Գրքում ողջույնի խոսքով են հանդես եկել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, Բունդեսթագի նախագահ դոկ. պրոֆ. Նորբերտ Լամերթը, Գերմանիայում ՀՀ դեսպան դոկտ. Վահան Հովհաննիսյանը, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ, Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա, Գերմանահայոց առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Գարեգին Բեկչյանը, Գերմանական կաթոլիկ եւ ավետարանական եկեղեցիների բարձրաստիճան հոգեւորականներ, Լեփսիուս ընտանիքի անունից դոկտ. պրոֆ. Մանֆրեդ Աշքե-Լեփսիուսը: Հատորի հաջորդ բաժիններում հայ եւ գերմանացի հեղինակների գրիչը ծանրացել է մինչ առաջին աշխարհամարտը երկու երկրների միջեւ ստեղծված մշակութային, պատմական կապերին, այնուհետ մանրամասնել մինչ մեր օրերը ձգվող զուգահեռները,

ARMENIAN GENOCIDE
24 april 1915
light a candle ...

ARMENIAN JEWELLERS ASSOCIATION
YEREVAN SHOW 2013
OCTOBER 28-30
INTERNATIONAL JEWELRY EXHIBITION

Սրբագրում եւ խմբագրում ամեն ծավալի ու բովանդակության հայերեն տեքստերի, գրքերի
E-mail: xachagox@mail.ru
հեռ.՝ 094 48-68-03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹԻ ՆՈՐ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐՆ ԵՆ

համայնք
Իրազեկիչ կառավարման ծառայ

Report!am

ԱԶԴԱԳԻՐ

ՎԻՔԻՊԵԴԻԱ
Ազատ հանրագիտարան











ՄԵԿ ՏԱՐԻ ԱՌԱՋ

անդրադարձել Գերմանահայկական ընկերակցության ունեցած դերին, ԽՍՀՄ փլուզումից հետո երկու երկրների կապերին, անշուշտ ներկայացնելով նաեւ գերմանահայկական երկխոսությունը կերտող մյուս աշխույժ դերակատարներին համայնքային կառույցներին: Ուշագրավ է Ռաֆֆի Քանդյանի հեղինակած «Բունդեսթագի «հայկական բանաձեւի» ուղին», ինչպես նաեւ Զոհրապ Մնացականյանի «Մի հայացքով Հայաստան եւ Գերմանիա» եւ Շտեֆան Դորգերլոհի «Հանդիպումներ. Սաքսոնիա-Անհալթ ու Հայաստանը» հոդվածները:

- 1914-ին մեր պատմության ամենամռայլ ժամանակաշրջանում ստեղծվեց Գերմանահայկական ընկերակցությունը՝ Լեփսիուսի, Ռոհրբախի, Իսահակյանի ջանքերով: Լրագրային տարածքը նկատի առնելով մանրամասները թողնելով գիրք շարադրողներին, այդուհանդերձ ներկայացնենք ստեղծման պատմությունը մի կազմակերպության, որ ցայսօր կենդանի շունչ ունի:

- Պիտի հիշատակենք անոնք, որոնք հիմնական սյուներն էին այդ կազմակերպության 1914-ին եւ հաջորդող տարիներին:Անոնք արդեն վաղուց հայկական խնդիրներով զբաղվողներն էին: Լեփսիուսը, ինչպես գիտենք, 1894-ից համիդյան ջարդերի ընթացքից արդեն հետաքրքրված էր, ուներ իր բարեգործական կազմակերպությունը: Լեփսիուսը շատ մեծ վստահություն էր վայելում հայերի մոտ, իր տարած աշխատանքի շնորհիվ:Ինչո՞ւ հիմնվեցավ գերմանահայկական ընկերությունը. Գերմանիան այն ժամանակ համոզված էր, որ պետք է կապ հաստատել թե Թուրքիո հասարակության, թե Օսմանյան կայսրության հայերու հետ, որ կարողանա ավելի հեշտորեն լեզու գտնել վերջիններիս հետ: Կարծում էին՝ եթե ստեղծվի հայ-գերմանական կազմակերպություն մը, լեզու գտնելն ավելի հեշտ կլինի, մի կազմակերպություն, որ կամուրջի դեր մը պիտի ստանձներ:Հաջորդ սյունը Ռոհրբախն էր, շատ հայտնի հրապարակախոս էր ատենին, գերման մամուլում ուզած թերթում ասելիքն ուներ, ձայն կհաներ, երբ միությունը 100 տարի առաջ հունիսի 16-ին հիմնվեցավ, մարդիկ մեծ հույսերով ճանապարհ ընկան, անշուշտ հույսով, թե Deutsch-Armenische Geselschaft-ը որոշ ընկերային դեր պիտի խաղա: Շատ արագ այդ հույսերն ի դերեւ ելան, քանի որ պատերազմի ատենը ընդհանուր մթնոլորտն արդեն փոխվել էր: Բարեփոխումներու փաթեթը երբ ջնջվեց, գերմանահայկական ընկերակցության հույսը ջնջվեցավ:

- Ավետիք Իսահակյանի դերակատարումը:

- Ինքը հիմնադիրներեն մեկն էր: Երբ ընկերությունը հիմնվեցավ, ուզում էր պաշտոնական թերթ ունենալ, «Մեսրոպ» անունով, առաջին համարը կա, լույս տեսնելու պատրաստ էր նաեւ 2-րդ համարը: Բայց ընկերության ֆինանսական շատ լուրջ խնդիրների պատճառով 2-րդ համարը լույս չի ընծայվել:

- Ի՞նչ կար «Մեսրոպի» էջերում:

- Բանաստեղծություններ էլ կային, քաղաքական վերլուծություններ էլ, տարբեր բաներ, 16-17 էջանոց մի բան էր ADK-ի («Գերմանահայկական նամականի») ներկա ծավալի հետ համեմատել կարելի չէ: Հոբելյանական հատորի մեջ կա «Մեսրոպի» առաջին համարը: Իսահակյանը որքան ակտիվ է եղել, ասելը դժվար է, բայց հայտնի է, որ նա վարչության անդամ էլ է եղել, նույնիսկ գրքում զետեղել ենք մի լուսանկար, որ քաշված է 1915-ին Բեռլինում:1926-ին Լեփսիուսի մահից հետո վարչության գլուխ անցավ Ռոհրբախը: Կարեւոր դեր խաղաց ընկերակցությունը 1-ին՝ Թեհլերյանի դատի ատեն, Յոհաննես Լեփսիուսը վկաներեն մեկն էր, որ դատարան կանչված էր եւ հիմավոր տեղեկություններ տրամադրեց: 2-րդը քչերին է հայտնի՝ 1-ին համաշխարհային պատերազմի ավարտին Լոզանում բանակցություններ պիտի ընթանային Թուրքիո ազգային կառավարության եւ արեւմտյան պետություններու միջեւ, գերմանահայկական ընկերությունը կոչով դիմած է Լոզանի բանակցություններու ընթացքին, որ հայանպաստ որոշ որոշումներ կայացվին, թեպետ չէ հաջողած, բայց ատենին ընկերությունը փորձած է սատար կանգնիլ հայերուն: Լեփսիուսի մահից հետո կառավարեց Ռոհրբախը մինչեւ իր մահը՝ 1936 թվականը, 30 երկար տարի եղավ անոր ատենապետը, բայց անշուշտ Վայմարյան պետության տարիներին, մինչեւ 1933-ը մինչեւ Հիտլերը իշխանության գլուխ անցավ, անելիք շատ բան ալ չուներ միությունը: 1933-ից հետո, քանի որ նացիներու գաղափարախոսությանը հաշտ բան մը չէր ատիկա, գերմանահայկական ընկերությունը փորձել էր հայերուն պաշտպան հանդիսանալ. անոնք, որոնք ապրում էին Գերմանիայում, փորձում էին փաստել, թե հայերը արիական ցեղից կսերեին եւ որոշ չափով ալ հաջողեցան վկայակոչելով, թե հայերը սեմական ցեղ չեն:1956-ին, երբ Ռոհրբախը մահացավ, ընկերությունը թղթի վրա միայն գոյություն ուներ, ջնջվեցավ միություններու ցանկից, վերակենդանացումը կպարտինք երիտասարդ ուսանողների մասնավորապես Արմեն Հախնազարյանին եւ նրա համախոհներին, որոնք 1960-ականների կեսերից սկսյալ որոշ ջանքեր թափեցին: 1972-ին կազմվեցավ Գերմանահայկական ընկերակցությունը, այն ատենը հիմնվեցավ Armenisch- Deutsche Korrespondenz -ը («Գերմանահայկական նամականի») իրենց առաջին պարբերականն էր:Կարող ենք ասել, որ մեր ընկերությունը երկու կյանք ունեցած է 40-42 տարվա առաջին շրջանը եւ վերակենդացման շրջանը, որ 1972-ից մինչ օրս է: Այժմ ԳՀԸ ունի 185 անդամ՝ թե գերմանացիներ կան, թե հայեր:

- Այն ժամանակ, երբ Հայաստանը չուներ անկախ պետականություն, դեսպանություն, այդ առաքելությունը ստանձնել էր նաեւ գերմանահայկական ընկերությունը:

- Վստահ այդ դերը խաղցած է: Մեր ճայունն անշուշտ ADK է: 1972-ից սկսել էին հանդեսի հրատարակումը, բայց շատ լավ տեղյակ չեմ, թե սկզբում ինչ պարբերականությամբ էին հրատարակում:1997-ի հունվարից ի վեր տպագրվում է այժմյան ընդունված 21x28 չափսերով, տարեկան 4 համար: Հայտնի բաժիններով՝ Հայաստան եւ Գերմանիա, Հայաստան եւ Թուրքիա եւ այլն: Վերջերս ավելացրինք մի բաժին, որ կոչվում է՝ տնտեսություն, շրջակա միջավայր, ընկերային: Կուզեմ անդրադառնալ «Գերմանահայկական ընկերության 100-ամյակը. հիշել, հիշատակել, կերտել» հատորին, շատ դրական է արձագանքը: Հուսով ենք, որ գրախոսականներ էլ կլինեն:

- Ձեր աշխատանքի լավագույն գնահատականը ո՞վ եւ ինչպե՞ս է հնչեցրել:

- ADK իբրեւ լուրջ հանդես են գնահատել, այդ մեկը կարեւոր է: Գարեգին Ա կաթողիկոսը, երբ 1998-ի հունվարին Գերմանիայում էր, Բոնի Ռեդուրում խոսում էր, մարդիկ հիացմունքով էին լսում: ԳԴՀ արտգործնախարարության Կովկասի բաժնից մեկն ասաց, թե նախկին ԽՍՀՄ հանրապետությունների ազգությունների հրատարակած հանդեսները մեզի ծանոթ են, կարդում ենք, դրանց մեջ ամենից պրոֆեսիոնալը ADK է: Գերմանական հայտնի FAZ-ի այն ատեն Միջին Արեւելքի, նաեւ Թուրքիո թղթակիցը իր առջեւ դրված արեւմտյան լեզուներով հանդեսները թերթել էր, մեր հանդեսին տվել հետեւյալ գնահատականը՝ «Միակ պրոֆեսիոնալը սա է, լուրը հոստեղը կա», ասել էր: Այն օրվանից մինչեւ հիմա ճանապարհ ենք անցել, դրանից հետո եռամսյա մեր հանդեսը շատ է փոխվել: Ոչ միայն ծավալի, այլեւ բովանդակային առումով էլ: Վերլուծականն է մեզի համար առավել կարեւոր: Ցավոք սրտի, ADK գերմանախոս երկիրներու մեջ գոյություն ունեցող միակ հանդեսն է: Ատենին

Շվեյցարիայում կար, ցավոք սրտի փակվեց, Ավստրիայում չի եղել:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ #28, 19-09-2014

2014-09-19 ԿԻՍԱՑ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ԿԻՍԱՑ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
2014-09-19 ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՔԱՂՑԱԾ ՄԱՐԴԿԱՆՑ ԹԻՎԸ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ՆՎԱԶԵՑՐԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆՅԱԿՈՒՄ
2014-09-19 5-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ՝ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԱԹԵՏԻԿ
2014-09-19 ԿԵՍ ՏԱՐԻ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ՝ ԱՐՎԱԾՆ ՈՒ ՉԱՐՎԱԾԸ
2014-09-19 ԱՌ ՈՐ ԱՆԿ Է
2014-09-19 ՔԱՌՅԱԿ, ԹԵ՞ ԵՌՅԱԿ՝ ՀՍՏԱԿԵՑՈՒՄԻՑ ՉԵՍ ՓԱԽՉԻ
2014-09-19 ISIS-Ի ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼԸ ՊԱՏՃԱՌ ՉԷ ԽՈՍԵԼՈՒ ԱՊՈԿԱԼԻՊՍԻՍԻ ՄԱՍԻՆ
2014-09-19 ՄԱԿ-Ի ՈՒԺԵՐԸ ՀԵՌԱՆՈՒՄ ԵՆ ԳՈԼԱՆԻՑ
2014-09-19 ՈՒԿՐԱԻՆԱՆ ԵՎ ԵՄ-Ը ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ
2014-09-19 «ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ» ՎԻԹԽԱՐԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ
2014-09-19 ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ
2014-09-19 ՆՈՐ ՕՍՄԱՆԻԶՄԸ ՈՒՂԻ Է ՀԱՐԹՈՒՄ
2014-09-19 ԺՈՂՈՎՐԴԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿԱՅԻՆ ՇԵՂՈՒՄ
2014-09-19 ՀԱՅԱՍՏԱՆԻ «ԲԱՑ ԵՐԿԻՆՔԸ» ՄԵԿ ՏԱՐԻ ԱՆՑ
2014-09-19 «SUPER 0 ՕՐԱԿԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՅԺՄ ՆԱԵՎ «ԲԱՐԲԱՌ» ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ
2014-09-19 «SIP TALK». ՁԱՆԳԵՐ ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՖԻՔՍՎԱԾ ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊՈՎ՝ ՄԱՏՉԵԼԻ ՍԱԿԱԳՆԵՐՈՎ
2014-09-19 ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԻ ԱՌՅԱՆՑ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ՝ ՎԻՎԱՍԵԼՄՏՍ-Ի ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ
2014-09-19 ԱՄՈԹԱԼԻ ԲԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ
2014-09-19 «ՀԱԼԵՊԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» ՈՐԲԵՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ
2014-09-19 ՅՈ՞ՅՍ, ԹԷ՞ ԻՆՔՆԱԽԱԲԷՈՒԹԻՒՆ
2014-09-19 ԲՈՀՋԱԼՅԱՆԸ ԵՎ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ «ԿԼԱՐՔ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ
2014-09-19 «ԳԵՐՄԱՆԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԱՎԵԼԻ ՔԱՆ 100 ՏԱՐԻ»
2014-09-19 ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՀԱՅՏՆԻ ԵՎ ԳԵՂԵՑԻԿ ԱՌԱՋԻՆ ՏԻԿԻՆՆԵՐԻ ՅՈԹՆՅԱԿԸ
2014-09-19 ԱՄԱՌ, ԲԱԹՈՒՄԻ, ԾՈՎԱՓՆՅԱ ՀԱՆԳԻՍՏ
2014-09-19 ՍԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ Է, ՇԱՌԼ
2014-09-19 ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ԱՐԱՄ ՂԱՐԱԲԵԿՅԱՆԻՆ

Anmelden Du nutzst Facebook zurzeit als „Deutsch-Armenische Gesellschaft“. Um die sozialen Plug-Ins von Facebook nutzen zu können, musst du Facebook als „Raffi Kantian“ nutzen.

Anmelden Du nutzst Facebook zurzeit als „Deutsch-Armenische Gesellschaft“. Um die sozialen Plug-Ins von Facebook nutzen zu können, musst du Facebook als „Raffi Kantian“ nutzen.

© AZG Daily & MV, 2009, 2011, 2012, 2013 ver. 1.4

Rambler's Top100 04530265